

ՀԵՏՂԻՐՆԵՐԸ ԳԱԼԵՇԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Գալեշին Գիլաքիի բարբառներից է, որով խոսում է Գիլանի և Մազանդարանի լեռնային շրջաններում և անտառներում բնակվող՝ *գալեշ* անվանումը կրող էթնոսոցիալական ենթախումբը: *Gāles* եզրը մերձկասպյան բարբառներում նշանակում է խոշոր եղջերավոր անասունների հովիվ: Գալեշներն իրենց կենցաղա-տնտեսական կացութաձևով գիլանական ազգաբնակչության առանձին ենթախումբ են կազմում<sup>958</sup>:

Գալեշի բարբառը տարածված է Ռուդբարի արևելյան լեռնային շրջաններում, Դեյլեմանի ամբողջ տարածքում, էշքեվարաթում և հասնում է մինչև Թոնքաբոնի մերձակա շրջանները: Գալեշի բարբառը, գիլաքիի նման, իր պատմական զարգացման ընթացքում անցել է արևմտյան լեզվախմբի մյուս ժամանակակից իրանական լեզուների ուղին: Նկատի առնելով տեղացիների շրջանում տարածված երկլեզվությունը՝ պետք է նշել, որ գալեշերենը մեծապես կրում է պարսկերենի ազդեցությունը, մասնավորապես, հնչյունաբանության մեջ և բառապաշարում:

Գալեշի բարբառում հիմնականում գործածական է հետդիրային բավական զարգացած համակարգը: Նախդիրները խիստ հազվադեպ են և, որպես կանոն, հանդիպում են միայն պարսկերենից փոխառյալ կառույցներում: Կապերի այս տեսակն ըստ դիրքային հիմունքի, կապվող բառին է հարում վերջից, այսինքն՝ վերջահար է և կոչվում է հետդիր կամ հետադրություն: Մեծմասամբ հետդիրներից առաջ դրվող բառն օգտագործվում է թեք հոլովով, բացառությամբ *-rə* և *-(r)ə* հետդիրի, որը ձևավորում է որոշյալ ուղիղ խնդիրը և *-je* հետդիրի, որից առաջ թեք հոլով են ստանում միայն դերանունները, մինչդեռ գոյականները դրվում են ուղիղ հոլովով: Հիշյալ երկու հետդիրները մեր կողմից դիտարկվում են որպես համապատասխան բառի ձևային և նախորդող բառին են միանում գծիկով: Մյուս բոլոր հետդիրները գրվում են առանձին:

• *-rə/-ə*

Գիլաներենի *-re*, գալեշի բարբառի *-rə* և *-ə* հանգում է ավելի վաղ *\*-ra* ետդիրին և իրականում օժտված է հենց նույն՝ հայցական-տրական հոլովների ցուցչի կիրառություններով, ինչ վաղ *\*-ra* և *\*(r)a*, սակայն օժտված է առավել սահմանափակ հնարավորություններով: Հարկ է նշել, որ եթե ուղիղ խնդիրը վերջանում է բաղաձայնով, գալեշերենում միանում է *-ə* տարբերակը, իսկ գիլ. *-e*, ձայնավորի դեպքում՝ *գալեշ. -rə*, գիլ. *-re*, երբեմն ձայնավորին ավելանում է նաև *-ya* տարբերակը, ինչպես

Kāyoz-ə pərə bākordəm. «Թուղթը պատռեցի»: /զլշ./

Harki-ya be:di bougu biye. «Ում որ տեսար, սսա թող գա»:

***-rə* և *-ə* ետդիրը ձևավորում է.**

ա) որոշյալ առմամբ ուղիղ խնդիր (հայցական հոլով)

բ) հանգման անուղղակի խնդիր (տրական հոլով).

Օրինակներ՝

ա) Mo kitāb-ə bābord-am. «Ես գիրքը տարա»:

բ) Čan ruze digar šəmə-rə xabər danəm. «Մի քանի օրից ձեզ կտեղեկացնես»:

Yə kitāb Zarā-ya hadam. «Զահրային մի գիրք տվեցի»:

Ինչպես արդեն նշվել է վերևում, *-rə* հետդիրին նախորդող դերանունները դրվում են թեք հոլովով.

<sup>958</sup> Hüšang-e Pür-karīm, “Dehkade-ye Samā (3)”, Honar va mardom, 98 (December 1970), p. 46, *apud*: Asatrian G., *The lord of cattle in Gilan*, “Iran and the Caucasus”, Vol 6, 1-2, Brill, Leiden-Boston, 2002, p. 82.

անձնական դերանունները գալեշերենում /ուղղիղ հոլով/				անձնական դերանունները գալեշերենում <i>-rə</i> ետդիրի հետ			
mo	ես	amə	մենք	mə-rə	ինձ	amə-rə	մեզ
to	դու	šəmə	դուք	tə-rə	քեզ	šəmə-rə	ձեզ
on	նա	ošān, išān	նրանք	on-ə	նրան	ošān-ə, išān-ə	նրանց

Օրինակ՝

Vaghti Zārā tərə be:da xeli xošālābā. «*Երբ Չահրան քեզ տեսավ, շատ ուրախացավ*»:

• **-ji**

Գիլաներենում **-ja**, գալեշերենի բարբառում **-ji** ետդիրը հանգում է հին իրանական \*hača (հմմտ. հ.պ. hačā, ավ. hačā, hača) նախդիրին և հիմնականում գործածվում է բացառման, անջատման, բաժանման նույն նշանակություններով, ինչ և պարսկերենից փոխառյալ *az* նախդիրը<sup>959</sup>: Սակայն հարկ է նշել, որ գիլաներենում փոխառված *az* նախդիրը բնավ չի կիրառվում գալեշերենի բարբառում:

**-ji** ետդիրը ելման իմաստ է հաղորդում բառին, որի հետ գործածվում է, որով և ցույց է տրվում այն առարկան, որից գատվում, սկսվում, կամ սերում է գործողությունը, ինչպես օրինակ՝

Mo sagə-ji natərsanəm. «*Ես շնից չեմ վախենում*»:

Zarā Kobra-ji intizarə komak nədarə. «*Չահրան Քոբրայից օգնություն չի սպասում*»:

Երբեմն **-ji** հետդիրը գիլաներենում և գալեշի բարբառում ունի նաև գոյականին նախադաս կիրառություն, որի դեպքում արտասանվում է **-jə**, ինչպես՝ **rā-ja**, **rā-ji** «ճաանապարհից», բայց՝ **jə- rā**<sup>960</sup>:

Հարկ է նշել, որ ժամանակի ու տարածության մեջ հեռացման և ելման նշանակություններով ոչ միշտ է հանդես գալիս **-ji** հետդիրը: Ավելացնենք նաև, որ այդ դեպքերում չի կիրառվում նաև այլ նախդիր կամ ետդիր, ինչպես՝

Ijə tā anzali cendi rāya? «*Այստեղից մինչև Էնզելի ինչքա՞ն ճանապարհ է*»:

Ավելի ուշ ծագման մնացած հետդիրներն անվանական են կամ ունեն բարդ ծագում:

• **Hamra «հետ, միասին, միջոցով»**

Hamra «հետ, միասին, միջոցով» ետդիրը, որը պարսկերեն ham+rāh բառաբարդումն է «միասին» իմաստով, հաղորդում է ա) համատեղության, միատեղության իմաստ, բ) գործածվում է որպես գործիականի ցուցիչ ինչպես օրինակ՝

Hasan mašinə hamra boma. «*Հասանը մեքենայով եկավ*»:

Mo ošanə hamra šonəm. «*Ես նրանց հետ գնում եմ*»:

• **Dəl «մեջ»**

Dəl «մեջ» ետդիրը, որը պարսկերեն նշանակում է «սիրտ», կիրառվում է «մեջ» կապի իմաստով, ցույց է տալիս գտնվելու վայրը կամ ուղղություն դեպի ներս: Օրինակ՝ Xānə dəl yə qašangə qāli niyābā. «*Տան մեջ մի գեղեցիկ գորգ կա*»:

• **Tāt ետդիրը**

Tāt ետդիրը կիրառվում է «փոխարեն» իմաստով, ինչպես՝

Ami tāt ziyārət bākon. «*Մեր փոխարեն ուխտի գնա*»:

<sup>959</sup> Основы Иранского языкознания, Новоиранские языки, Москва, 1982, стр, 546.

<sup>960</sup> Mas'oud Pourhādi, *Zabān-e Gilaki*, RaÛt, 2007, p. 42.

• Sar «վրա»

Sar «գլուխ» նշանակությամբ գոյականը, ինչպես պարսկերենում, այնպես էլ գիլաներենում ու գալեշի բարբառում որպես ետդիր հանդես է գալիս «վրա» նշանակությամբ՝ ցույց տալով գտնվելու վայրը կամ շարժում ինչ-որ բանի վրայով: Օրինակ՝

Mi xāxorə dimə sar yə xāl darə. «Քրոջու այտի վրա մի խալ կա»:

Գալեշերենի պարսկերեն փոխառություններում կիրառական է **tā** «մինչև» նախդիրը, որն օգտագործվում է թե՛ տարածական և թե՛ ժամանակային առումով<sup>961</sup>, օրինակ՝

Tā šouv xošte ma:rə xānə həssəbā. «Մինչև գիշեր իր մայրիկի տանն էր»:

Այսպիսով, գալեշի բարբառում ետդիրներին նախորդող անունները, ներառյալ նաև դերանունները, դրվում են թեք հոլովով:

## ПОСЛЕЛОГИ В ДИАЛЕКТЕ ГАЛЕШИ

*Эбрагим Сафари*

(Резюме)

Галеси - субэтническая группа гиланцев, живущих в горной местности Гиляна и Мазандарана, говорящих на особом диалекте гиланского и занимающихся преимущественно скотоводством. Термин *gāleš* в прикаспийских диалектах обозначает “пастух крупного рогатого скота”. Диалект *галеси* является одним из восточных диалектов *гилаки*. Данная статья посвящена сравнительному исследованию системы послелогов диалекта галеси и гиланского языка. В диалекте галеси послеложная система преобладает над предложной. Имена, в том числе и местоимения, обычно выступают перед послелогоми в родительном падеже.

<sup>961</sup> Mahmud Ranjbar, Raghieh Rādmard, “*Barresi va tousif-e GuyeŪ-e GaleŪi*”, RaŪt: Gilkān 2004, p. 78.